600.0091.22.03.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մարտի 2017 թվականի №91Ա
քաղ. Երևան

«ԷԴ ԸՆԴ ԷՄԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի №541Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 2017 թվականի փետրվարի 21-ի №03/11.1/2419-17 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (այսուհետ՝ հանձնաժողով) տեղեկացրել է «ԷԴ ԸՆԴ ԷՄԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) պատկանող ռադիոցանցի բազային ռադիոկայանի տեղափոխման վերաբերյալ,

բ) ռադիոհաճախականության օգտագործման №0454 թույլտվության պայմանների խախտման՝ բազային ռադիոկայանի տեղադրման վայրի փոփոխության փաստի ուսումնասիրման նպատակով, հանձնաժողովի կողմից 2017 թվականի փետրվարի 22-ից ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, ինչի մասին ընկերությունը ծանուցվել է 2017 թվականի փետրվարի 22-ի №ԱԲ-416Հ գրությամբ,

գ) ընկերությունը 2017 թվականի փետրվարի 27-ի գրությամբ հանձնաժողովին տեղեկացրել է իր կողմից թույլտվության պայմանների խախտմամբ բազային ռադիոկայանի անօրինական աշխատանքը դադարեցնելու վերաբերյալ, միաժամանակ խնդրելով փոփոխություն կատարել հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 8-ի №541Ա որոշմամբ հաստատված ռադիոհաճախականության օգտագործման №0454 թույլտվության պայմաններում,

դ) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ ընկերությունը վերացրել է թույլտվության պայմանների պահանջի խախտումը, և

հիմք ընդունելով «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ հանձնաժողովը որոշում է.

1. Կարճել հանձնաժողովի կողմից 2017 թվականի փետրվարի 22-ից ընկերության նկատմամբ ռադիոհաճախականության օգտագործման №0454 թույլտվության պայմանների խախտման՝ բազային ռադիոկայանի տեղադրման վայրի փոփոխության փաստի ուսումնասիրման նպատակով հարուցված վարչական վարույթը:
2. Հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 8-ի «ԷԴ ԸՆԴ ԷՄԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №541Ա որոշմամբ հաստատված ռադիոհաճախականության օգտագործման №0454 թույլտվության պայմանների 3.1-րդ կետի 2-րդ, 4-րդ և 10-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «2) բազային ռադիոկայանի տեղադրման վայրը՝ քաղաք Երևան, Արտաշատի խճուղի 5/7.».

   «4) բազային ռադիոկայանի տեղադրման վայրի աշխարհագրական կոորդինատները՝ 44E 29′ 05″, 40N 07′ 04″.».

   «10) անտենայի բարձրությունը երկրի մակերեսից՝ 15 մետր.»:
3. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում այն բողոքարկել հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
22 մարտի 2017թ.